



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ  
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

## ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Կարդացածը հասկանալու կարողության ձևավորումը  
մաթեմատիկայի ուսումնական գործընթացում

Առարկան՝ Մաթեմատիկա

Հետազոտող ուսուցիչ՝ Նաիրա Հակոբյան

## Բովանդակություն

Ներածություն-----	3
Կարդացածը հասկանալու կարողության ձևավորումը մաթեմատիկայի ուսումնական գործընթացում-----	4
Եզրակացություն-----	14
Օգտագործված գրականության ցանկ-----	15

## Ներածություն

Թեմայի կարևորությունը: Ուսուցման պրոցես ասելով ամենից առաջ հասկանում ենք գիտելիքների հաղորդումն ու ձեռքբերումը, իսկ ապա նաև մարդու համար կենսական նշանակություն ունեցող կարողությունների ձևավորումը: Գիտելիքի մեծ մասը ձեռք է բերվում որպես աշխարհի ճանաչման միջոց, որպես գիտելիք կամ տեղեկություն մարդկության անցյալի, ներկայի ու ապագայի, խոշոր հայտնագործությունների, նշանավոր դեպքերի ու դեմքերի, բնության, բուսական ու կենդանական աշխարհի, գիտության տարբեր բնագավառների մասին:

Կարողությունները բնատուր չեն, այլ՝ ձեռքբերովի և ունակությունների ու գիտելիքների հիմքի վրա, տևական վարժությունների միջոցով ձևավորվող հատկանիշներ են, որոնք հետագայում անդրադարձ ձևով դառնում են մարդու մտավոր առաջընթացի ու փորձառության հիմնական չափանիշը: Կարողությունը հեշտացնում է մարդու գործունեությունը, նրա սովորած գիտելիքների համար գործնական կիրառության լայն ասպարեզ է բացում, այդ գիտելիքների գործադրման և մարդու համար դրանց գործնական արժեք ստանալու հնարավորություն են ընձեռում:

Թեմայի նպատակը: Կարդալու գործողությունը, ըստ էության, հոգեկան մի բարդ երևույթ է, որի վերլուծությունը կօգնի հնարավորին չափ ճիշտ ըմբռնելու այդ պրոցեսի առանձին կողմերն ու դրանց ուսուցման դժվարությունները: Կարդալու համար միայն տառերը ճանաչելն ու միմյանցից տարբերակելը դեռևս բավական չէ. պետք է նաև դրանք վերածել իրենց համապատասխան հնչույթներին կամ հնչյուններին, այսինքն՝ տեսողական տպավորությունները վերածել ձայնական, հնչյունային տպավորությունների: Սա կարդալու մի աստիճան է, որը կոչվում է հնչյունաշարժողական պրոցես:

Մաթեմատիկայի դասագործընթացում սահմանափակ են ժամաքանակն ու պայմանները, որի հետևանքով միշտ չէ, որ հնարավոր է լինում լիարժեք 40 րոպե ուշադրություն տրամադրել աշակերտների արտահայտիչ խոսքին և ընթերցանությանը: Յուրաքանչյուր դասն իր կարևոր տեղն ունի ոչ միայն դասարանային, այլև ընդհանուր առմամբ, ողջ ուսումնադաստիարակչական աշխատանքների ընթացքում:

## Կարդացածը հասկանալու կարողության ձևավորումը մաթեմատիկայի ուսումնական գործընթացում

Ուսումնասիրելով հանրակրթական դպրոցի առաջին և երկրորդ դասարանի դասագրքերը՝ տեսնում ենք, որ այստեղ տրամաբանության տարրերին վերաբերող նյութեր չկան: Փոխարենը երեխաների տրամաբանական մտածողության զարգացման հարցը լուծվում է բազմաթիվ տրամաբանական խնդիրների միջոցով: Երրորդ դասարանի դասընթացում երեխաները ծանոթանում են ճշմարիտ և կեղծ դատողությունների հետ: Առկա են բազմաթիվ վարժություններ, որոնցով պարզվում է դատողության ճշմարիտ կամ կեղծ լինելը: Չորրորդ դասարանի դասագրքում նույնպես կան վարժություններ ճշմարիտ և կեղծ դատողությունների վերաբերյալ: Յուրաքանչյուր դասի վարժությունների համակարգում առանձնացված են ոչ ստանդարտ տրամաբանական խնդիրներ և վարժություններ: Տրամաբանության տարրերին վերաբերող ծրագրային նյութը պատշաճ արտացոլում է գտել նաև մաթեմատիկայի 3-րդ դասարանի մյուս այլընտրանքային դասագրքում ևս: Ընդ որում մեծ կարևորություն է տրվում նաև մաթեմատիկայի և մայրենի լեզվի միջառարկայական կապերին:

Մաթեմատիկայի դասերին գեղարվեստական լավագույն ստեղծագործությունների միջոցով աշակերտների մեջ սեր է արթնանում մեր ժողովրդի ու հայրենիքի հանդեպ, նրանք հաղորդակից են դառնում հայոց լեզվի ճոխությանը, գեղեցկությանն ու ճկունությանը: Սա առավել ազատ դասագործընթաց է, որը մեծ հնարավորություն է տալիս ուսուցչին՝ լրացնելու և խորացնելու աշակերտների գիտելիքները, որի արդյունքում երեխաները մղվում են դեպի գիրքն ու ընթերցանությունը, դեպի ինքնուրույն, որոնողական գործունեությունը, փորձում են հաղթահարել կարդալու դժվարությունները: «Ինքնուրույն ընթերցանության նյութեր» ձեռնարկներում ընդգրկված արձակ և չափածո գրական ստեղծագործությունները արծարծում են բազմապիսի թեմաներ, որոնք հնարավորություն են տալիս դասերի ընթացքում տարամակարդակ աշխատանքներ կազմակերպել՝ հաշվի առնելով աշակերտների հետաքրքրությունները:

Կարդալու տեսակները: Դասարանում բնագրի ընթերցումը կարելի է իրականացնել մի քանի ձևով՝ ձայնով կամ բարձրաձայն, լուռ կամ մտքում,

շարունակելով, բացատրելով կամ մեկնաբանելով, ընտրովի դերերով: Մրանցին յուրաքանչյուրն ունի իրականացման որոշակի մեթոդիկա:

Տարրական դասարաններում ավելի տարածված է ձայնով կարդալը, քանի որ այսպիսի ընթերցումը նպաստում է կարդալու կարողությունների մշակմանն ու կատարելագործմանը, ինչպես նաև ձևավորում է կարդացածը հասկանալու կարողություն: Ձայնով կարդալու միջոցով ուսուցիչն աշակերտներին տալիս է արտահայտիչ կարդալու նմուշ, հայտնաբերում է երեխայի կարդալու գործընթացի թերությունները:

Երբ երեխաներին վաղ տարիքից սովորեցնում են կարդալ և գրագետ գրել, նրանք ավելի շուտ են սկսում տարբերել գրավոր և բանավոր խոսքը, գրադվել ընթերցանությամբ և գրելու հմտություններով: Անկասկած, այն երեխաները, որոնք նախադպրոցական տարիքում յուրացրել են ընթերցանության և գրավորի հմտությունները, ավելի լավ կտվորեն, երբ գնան դպրոց: Այբուբենի իմացությունը նույնպես շատ կարևոր է, քանի որ բառերը կազմված են հնչյուններից և տառերից, այսպիսով այբուբենի դասավանդումը վաղ տարիքից կօգնի երեխային ավելի արագ հասկանալ, թե ինչպես են հնչյունները և տառերը կազմում բառեր, որոնք կարելի է ոչ միայն կարդալ այլ նաև գրել:

Ընթերցելու կարողությունը-ինչպես գիտենք, ընդգրկում է երկու կողմ՝ ընթերցանության տեխնիկան և ընթերցածի բովանդակության ընկալումը:

Ընթերցանության տեխնիկան գիտելիքի, ինչպես նաև հետագա ուսումնական կարողությունների հիմքն է, քանի որ բովանդակության լիարժեք ընկալում հնարավոր է տեխնիկապես վարժ ընթերցելու դեպքում միայն: Եթե երեխան վատ է կարդում, բնականաբար չի ցանկանում գրադվել ընթերցանությամբ: Մյուս կողմից՝ քիչ կարդալու պարագայում չի կարող լավ կարդալ, քանի որ կարողությունը զարգացնելու հնարավորություններն են սահմանափակ:

1-4-րդ դասարաններում ընթերցանության նյութերի ընտրությունն էլ ինքնանպատակ չէ: Կրտսեր դպրոցականի խոսքը զգայուն է: Հայ դասական ստեղծագործությունների ուսուցումը փոխանցում է այնպիսի լեզվական կաղապարներ, որոնք նպաստում են լեզվամտածողության զարգացմանը:

Համաշխարհային մանկական գրականությունից ընտրվում են այնպիսի նմուշներ, որոնց ընթերցումը խթանում է սովորողի ստեղծագործական միտքը, նպաստում երևակայության զարգացմանը:

Ընթերցել, դեռ չի նշանակում հասկանալ: Կարևոր է կարդացածը հասկանալ:

Իրեն հասկանալի տեքստը հասկանալի ներկայացնել դիմացինին: Ընթերցելիս առանձնացնել հիմնական ասելիքը, միտքը, գաղափարը: Բառարանի օգնությամբ բացատրել անծանոթ բառն ու դարձվածքը, գտնել հանդիպած բառերի հոմանիշներն ու հականիշները, պատմելիս դրանք փոխարինել համապատասխան բառով կամ արտահայտությամբ:

Դասագիրքը չի կարող լինել ուսումնական միակ կամ գլխավոր նյութը, տեղեկատվության միակ աղբյուրը. ուսումնական նյութերը անընդհատ թարմացվում-հարմարեցվում են սովորողին: Ուսումնական նյութերի հիմնական շտեմարանը մեղիագրադարանն է, որի բաժանորդն են սովորողն ու ուսուցիչը:<sup>1</sup>

Ընթերցանությունը պատուհան է, որով երեխաները տեսնում և ճանաչում են աշխարհը և իրենք իրենց: Արտահայտիչ ընթերցանությունը նաև այն է, որը սովորեցնում են կրտսեր դպրոցականներին և որի միջոցով նրանց դաստիարակում և զարգացնում են: Ընթերցանության կարողությունները և հմտությունները ձևավորվում են ոչ միայն որպես խոսքային և մտավոր գործունեությունների կարևոր տեսակ, այլ նաև որպես կարողությունների և հմտությունների բարդ համալիր, որն ունի ուսուցանող բնույթ, աշակերտների կողմից օգտագործվելով այլ առարկաները սովորելու ժամանակ: Հետևաբար, անհրաժեշտ է սիստեմատիկ, նպատակաուղղված աշխատանք սահուն, գիտակցված ընթերցանության հմտությունները տարեցտարի զարգացնելու և կատարելագործելու համար:

Ընթերցանության ժամանակակից հմտությունները իրենց մեջ ներառում են ամենաբիչը երկու հիմնական ենթաբաժին.

- ընթերցանության տեխնիկա (ճիշտ և արագ ընկալում և բառի հնչեղություն, նրանց միջև հիմնական կապը մի կողմից տեսողականն է, մյուս կողմից նաև ակուստիկ և խոսքաշարժային)

<sup>1</sup> Տես, Աբրահամյան Ս., Ժամանակակից հայերենի քերականություն, Երևան 1975թ. էջ 123-146:

2. Տես, Աբրահամյան Ս. և ուրիշներ, Ժամանակակից հայոց լեզու, հ2, Երևան 1974թ., էջ 56-89:

- բնագրի հասկանալիություն:

Լավ հայտնի է, որ այս երկու բաղադրիչներն էլ սերտ փոխկապակցված են և հենվում են մեկը մյուսի վրա. այսպես, ընթերցանության տեխնիկայի զարգացումը հեշտացնում է ընթերցածի հասկանալը, իսկ բնագրի հեշտ հասկանալը լավ և հստակ ընկալվում է: Դրա համար ընթերցանության հմտությունների ձևավորման առաջին փուլերում մեծ նշանակություն են տալիս տեխնիկային, հետո բնագրի հասկացողությանը:

Տարրական դասարաններում ընթերցանության դասերին արտահայտիչ խոսքի վրա աշխատանքը հանդիսանում է երեխաների խոսքի կարևորագույն փուլը: Արտահայտիչ ընթերցանությունը հստակ պահպանում է ստեղծագործության նյութը, ինչն էլ ընդգծում է «ընթերցանության» բառերը: Դա ապացուցում է ընտրված նյութի արդիականությունը:

Արտահայտիչ ընթերցանությունը հնչող խոսքի գրական-գեղարվեստական ստեղծագործության մարմնավորումն է:

Արտահայտիչ ընթերցանությունը ստեղծագործության նյութը ճիշտ է պահպանում: Հեղինակի մտքի պարզ և ճիշտ փոխանցումը արտահայտիչ ընթերցանության առաջին խնդիրներից է: Տրամաբանական արտահայտչականությունը ապահովում է փաստերի հստակ փոխանցումը: Հոգեբանությունը բարձր ընթերցանությունը դիտարկում է որպես մենախոսություն, հետևաբար, ընթերցանությանը պետք է բնորոշ լինի այն ամենը, ինչը բնորոշ է բանավոր խոսքին: Էմոցիոնալ ընթերցանությունը ընթերցողի էմոցիաները փոխանցում է լսողին:<sup>2</sup>

Արտահայտիչ ընթերցանության խնդիրները հանդիսանում են խոսքի կայացման կարևոր բաղադրիչներից: Իմանալով խնդիրները ուսուցիչը նպատակադրված է անցկացնել աշակերտների հետ աշխատանք, նրանց առջև դնելով որոշակի նպատակներ դրանց իրականացման համար: Այդ խնդիրներն են.

Ընթերցանության հմտությունների կատարելագործում. ճիշտ, սահուն, գիտակցական և արտահայտիչ կարդալու համար նպատակագրված աշխատանք:

Նյութի հետ աշխատելու ընթերցանության հմտությունների ձևավորում: Ուսուցիչը աշակերտների մոտ ձևավորում է ստեղծագործության վրա մտածելու հմտություններ,

<sup>2</sup> Տես, Գյուլամիրյան Ջ. Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, 2013թ, էջ 98:

ընթերցանության ընթացքում և ավարտի ժամանակ, ինչն էլ օգնում է բնագրի արագ յուրացմանը:

Սկզբնական գրական գիտելիքների ձևավորում:

Ընթերցանությունը ապահովում է երեխաների բարոյական և էսթետիկ դաստիարակությունը:

Երեխաների խոսքի զարգացում, մտածողություն, երևակայություն:

Թվարկված խնդիրները պետք է իրականացվեն մայրենի լեզվի դասերին: Եվ երբ նյութի հետ աշխատանքը կակտիվացնի երեխաների մտավոր աշխատանքը, կձևավորի աշխարհաճանաչումը և աշխարհագրագույնը: Արտահայտիչ ընթերցանության խնդիրներն ու փուլերը սերտ կապված են միմյանց հետ:

Սովորողների համար ընթերցանության հմտություններին ամբողջական տիրապետումը դպրոցում հաջող սովորելու պայման է, դրա հետ մեկտեղ, ընթերցանությունը՝ տեղեկատվության ձեռքբերման հիմնական միջոցներից մեկն է նաև ոչ ուսումնական ժամանակ: Ուսուցիչը պետք է լավ տիրապետի խոսքի տեխնիկական կողմին, այսինքն, ձայնին, շնչառությանը, դիկցիային, տիրապետում: Դրանից է կախված ճիշտ, արտահայտիչ ընթերցանությունը:

Խոսքի տեխնիկա: Մ. Ա.Ռիբնիկովան գրել է, որ արտահայտիչ ընթերցանության վրա աշխատանքի համակարգում անհրաժեշտ է ժամանակ արտահայտման հատուկ պարապմունքների համար:

Շնչառություն: Պետք է լինի ազատ, խորը, հաճախակի, աննկատ, կարդացողի կամքին ավտոմատաբար ենթարկվող:

Ձայն: Արտահայտիչ ընթերցանության համար շատ կարևոր են ձայները, հաճելի տեմբրը, բավարար բարձրությունը, լավող ձայնը:

Դիկցիա: Ուսուցչի խոսքի ամենակարևոր հատկություններից մեկը: Դիկցիայի վրա աշխատանքը խորհուրդ է տրվում սկսել արտիկուլյացիոն վարժանքից:

Օրֆոելիա: Բառերի ոչ ճիշտ շեշտադրություն, արտասանության ընդունված կանոնների ֆոնետիկ շեղում համարվում է ճիշտ խոսքի կոպիտ խախտում, առանց որի անհնար է խոսքի արտահայտչականությունը: Օրֆոելիան հաստատում է այդ նորմերը: Այսպիսով՝ կարելի է ասել, որ տարրական դասարաններում շատ կարևոր է կետադրական նշանների ուսուցումը ընթերցանության մշտնջուլ:



Կարդալու կարողության ձևավորման գերխնդիրը կրտսեր դպրոցականներին լավ կարդալ սովորեցնելն է:

Կարդալու կարողության ձևավորման և զարգացման գործընթացը չափազանց կարևոր է ընթերցվող նյութի, ընդհանրապես գրականության նկատմամբ հետաքրքրության բոցավառումը:

Կարդալու կարողության ձևավորման գերխնդիրը կրտսեր դպրոցականներին լավ կարդալ սովորեցնելն է:

Կարդալու կարողության ձևավորման և զարգացման գործընթացը չափազանց կարևոր է ընթերցվող նյութի, ընդհանրապես գրականության նկատմամբ հետաքրքրության բոցավառումը:

Տարրական դպրոցում անցկացրեցինք կարդալու ստուգումը:

Հետազոտական աշխատանքը կատարեցի տարրական դպրոցում: 2-րդ, 3-րդ և 4-րդ դասարաններում անցկացվեց կարդալու ստուգումներ:

Նշանակվեց օրեր յուրաքանչյուր դասարանի համար: Համապատասխան օրերին անցկացրեցինք լսումներ: Լսումներին ներկա էին՝ տնօրենը, փոխտնօրենը, հոգաբարձուները, ուսուցիչներ: Անցկացվեց ուսուցչանոցում: Սկսեցինք 2-րդ դասարանից, ապա 3-րդ, 4-րդ, որից հետո շարունակական բնույթ կրեց: Աշակերտների մոտ լարվածություն էր նկատվում, կարդում էին անհատական, մոտենալ հանձնաժողովի անդամներին:

Յուրաքանչյուր աշակերտ կարդում էր իր անցած դասերից որևէ մեկը և մեկական նոր դաս: Գնահատվում էին «հինգ» բալանոց համակարգով և յուրաքանչյուրը ստանում էր երկու գնահատական՝ հին և նոր դասերից:

Լսումներն անցան շատ սահուն, յուրաքանչյուր դասարանում նմուշներ կատարվեց բազմիցս կրկնվող թերությունների վերաբերյալ, հետագայում շտկելու նպատակով:

Հիմնականում ճիշտ կարդալու կարողության մշակման արդյունավետ հնարներն են, կետադրական նշանները հաշվի առնելով:

Մայրենիի դասի գլխավոր խնդիրը կրտսեր դպրոցականների կարդալու կարողության ձևավորումն է:

Բոլոր դասարաններում էլ կարդալու յուրաքանչյուր որակն էլ հանդիպեց.

- ճիշտ կամ անսխալ կարդալ,
- հասկանալով կամ գիտակցորեն կարդալ,
- վարժ կամ սահուն կարդալը,
- արտահայտիչ կամ գեղարվեստորեն կարդալ,
- արագ կարդալ:

Լսումներից հետո հինգ շաբաթ ժամանակ տրվեց երեխաներին: Դասավանդող ուսուցիչների հետ քննարկման արդյունքում որոշվեց աշխատանք կատարել թերությունները շտկելու համար:

Համապատասխան օրը վերսկսվեց լսումները: Աշակերտներն արդեն հանգիստ էին և ազատ: Ակնհայտ էր, որ այս հինգ շաբաթվա ընթացքում բավականին աշխատել էին:

Եվ ուսուցչի աշխատանքն էր երևում, և աշակերտի: Կարդում էին բոլոր կետադրական նշանները հաշվի առնելով: Այս անգամ լավագույն կարդացողները խրախուսվեցին:

Լսումներից հետո քննարկում աշակերտների ներկայությամբ էր: Քննարկեցին բոլոր թերությունները, խրախուսեցին լավագույն արդյունքները: Երեխաների մեջ ոգևորությունն ավելի մեծացավ: Հանձնաժողովի անդամները քննարկեցին և որոշեցին, որ շարունակական է լինելու այս լսումները:

Արտահայտիչ կարդալը գեղեցկացնում է լեզուն, խոսքը դարձնում է պատկերավոր, նպաստում է նյութի ըմբռնմանը, բարձրացնում է աշակերտների գեղագիտական ճաշակը:

Լավ կարդալ նշանակում է կարդալ ճիշտ, հասկանալով, սահուն և արտահայտիչ:

Այսպիսով՝ կարելի է ասել, որ կետադրական նշանների ճիշտ կիրառումը նպաստում է արտահայտիչ ընթերցանության կարողության ձևավորմանը, այն էլ տարրական դասարաններում, քանի որ կրտսեր դպրոցականները, շատ օրինաչափություններ չիմանալով ընդօրինակելով կարողանում են յուրացնել:

Աշակերտների պատասխանները պետք չէ քննարկել, շտկել: Ուղղակի կարելի է լրացուցիչ հարցերի օգնությամբ օգնել նրանց՝ նկարում տեսնել այն ավելին, քան իրականում պատկերված է:

Այնուհետև հարկավոր է աշակերտի ուշադրությունը հրավիրել ստեղծագործության հեղինակի անվան, ազգանվան վրա և պարզել, թե ծանոթ են այդ հեղինակին, նրա որ ստեղծագործություններն են կարդացել, ինչի՞ մասին է այն պատմում: Ծանոթ չէ՞, առաջին անգամ են հանդիպում, չէ՞ն հիշում, ուրեմն՝ անհրաժեշտ է որոշ տեղեկություններ հաղորդել հեղինակի մասին, ցույց տալ նրա նկարը, պատմել տվյալ տարիքի երեխաներին հետաքրքրող կենսագրական տեղեկություններ և այլն, թե ընդհանրապես այդ հեղինակը ի՞նչ թեմաներով է գրվում և այլն:

Այսպիսով՝ աշակերտը ձեռք է բերել հասկանալով կարդալու կարողություն, եթե նա.

1. Ըմբռնում է կարդացած ստեղծագործության մեջ ներկայացված դեպքերը, փաստերը,

2. Կարողանում է կռահել, հասկանալ հեղինակի կողմից բառերով չներկայացված մտքերը, այսինքն՝ ենթատեքստը, ակնարկների իմաստը, առաջին հայացքից ոչ էական թվացող փաստերը,

3. Ըմբռնում է իր ընթերցած գեղարվեստական բնագրի հիմնական միտքը՝ գաղափարը, կարողանում է այդ մասին դատողություններ անել, եզրահանգումներ կատարել,

4. Հասկանում է հեղինակի մտքերը, զգացմունքները, այն հիմնական գաղափարը, որոնց շուրջ հեղինակը կամենում է գրուցել, երկխոսության մեջ մտնել ընթերցողի հետ,

5. Կարողանում է երկխոսության մեջ մտնել կարդացած ստեղծագործության հեղինակի, ստեղծագործության գործող անձանց հետ՝ ներկայացնելով սեփական մտքերը, դատողությունները, կատարելով պարզ եզրահանգումներ:

Սովորաբար ցանկացած ուսումնական գործողություն ծավալելիս ակնհայտորեն դրսևորվում է վերլուծություն և համադրություն կատարելու կրտսեր դպրոցականների կարողությունների մակարդակը:

Վերլուծական ընկալում ունեցող աշակերտները հստակորեն նկատում և առանձնացնում են ուսումնասիրվող իրերի, երևույթների էական կողմերը, մանրամասները: Որպես կանոն՝ նման երեխաները նույն ունակություններն են

դրսևորում ծրագրով ցանկացած ուսումնական նյութի յուրաքանչյուր գործընթացում: Վերլուծական ընկալում ունեցող աշակերտը կարողանում է հանգամանորեն վերլուծել ցանկացած բնագիրը, վերարտադրել բովանդակությունը՝ գրեթե չմոռանալով որևէ մանրուք: Վերլուծական ըմբռնման գերակայություն ունեցող աշակերտները չեն բավարարվում ընդհանուր դատողություններով, նկարագրություններով, նրանք բազմաբնույթ հարցեր են տալիս կարդացածի, տեսածի, բացատրածի շուրջ՝ ձգտելով խորամուխ լինել երևույթների մանրամասնի մեջ՝ դրանք համեմատելով իրենց ծանոթի, իմացածի հետ, հակադրելով միմյանց, գտնելով ընդհանրություններն ու տարբերությունները:

Համադրական ընկալման գերակայություն ունեցող աշակերտները սովորաբար առանձին երևույթների, դեպքերի, իրենց ընկերների նկատմամբ ունենում են ընդհանուր, նախապես ձևավորված, կայուն վերաբերմունք՝ դիրքորոշում: Անատարկելի է, որ նման դիրքորոշումը հաճախ կարող է ոչ համարժեք լինել իրականությանը, քանի որ այդ եզրակացությանը երեխաները հանգել են առանձին վերցրած տպավորությունների հիման վրա: Հասկանալի է, որ ընկալման նման տեսակի գերակայության դեպքում շրջապատի, տեղի ունեցող դեպքերի, երևույթների նկատմամբ ունեցող վերաբերմունքը, գնահատումը երեխաները կիրականացնեն ոչ հիմնավոր, ոչ արդարացի, ոչ օբյեկտիվ սկզբունքների հիման վրա՝ առանց հաշվի առնելու եզակին, առանձինը, անհատականը, յուրաքանչյուր՝ չկարևորելով տեղի ունեցող փոփոխություններն ու զարգացման շարժընթացը: Բնականաբար, այդպիսի ըմբռնման տեր մարդը կբավարարվի իր ունեցած տեղեկություններով, իր իմացածով և չի ձգտի խորամուխ լինել երևույթների մեջ, ավելին՝ կդադարի նորը իմանալու քայլեր կատարել, հանգամանք, որը կխոչընդոտի նաև նոր գիտելիքների, նոր կարողությունների ձեռք բերմանը, այսինքն՝ զարգացմանը:

Քննադատական մտածողությունը ձեռք բերած տեղեկույթը վերախմաստավորելու և ձևափոխելու բարդ գործընթաց է, որն իրականանում է գաղափարների և միջոցների ստեղծագործաբար համադրելու միջոցով: Այն ինքնուրույն մտածողություն է: Քննադատորեն մտածող մարդն առանց քննարկելու, բանավիճելու այնքան էլ հաճախ չի կիսում մեկ ուրիշի տեսակետը: Նա մտածում է և ինքնուրույն, ազատ, անկաշկանդ արտահայտում իր կարծիքը: Ուսումնական գործընթացում կիրառելով

քննադատական մտածողության զարգացմանը նպաստող մեթոդներ ու հնարներ՝ լիովին համոզվել ենք, որ կրտսեր դպրոցականներն էլ կարող են սովորել քննադատաբար մտածել, դառնալ իրենց ուսումնառության գործընթացի ակտիվ դերակատարներ: Համագործակցելով իրենց դասընկերների և ուսուցչի հետ՝ աշակերտները դառնում են ակտիվ սովորող, մտածող անհատներ:

Ի վերջո, արդյունավետ քննադատական մտածողություն դրսևորելու համար.

- Զարգացնել աշակերտի ինքնավստահությունը, բարձրացնել ինքնագնահատականը և հանգեցնել այն համոզման, որ իրենց կարծիքներն ու մտքերն արժեքավոր են,

- Ակտիվորեն մասնակից դարձնել ուսումնական գործընթացին,
- Մղել ձևակերպելու և հարկ եղած դեպքում՝ նաև ձևակերպելու իրենց սեփական դատողությունները, մշակել գնահատող խոսք կառուցելու կարողություն:

Խոսքի զարգացմանը միտված ցանկացած ցանկացած ուսումնական գործունեություն իր մեջ ներառում է՝

- Հաղորդակցման գործընթացի նախապատրաստություն (մտքերի հավաքում՝ նախագծում),

- Դրան համապատասխան խոսքային գործունեություն,
- Վարած հաղորդակցական գործընթացի արդյունքները վերլուծելու և գնահատելու ունակություն:

Ժամանակի ընթացքում դպրոցում դասավանդվող մաթեմատիկա են ներթափանցել մաթեմատիկական անալիզի և բազմությունների տեսության որոշ հասկացություններ, որի հետևանքով ավելի է դժվարանում տարրական մաթեմատիկայի և բարձրագույն մաթեմատիկայի սահմանազատումը: Այնուամենայնիվ, տարրական մաթեմատիկայի հասկացություններն ու մեթոդները, որոնք շարունակում են զարգանալ ու նոր կիրառություններ գտնել, էապես տարբեր են մաթեմատիկայի անալիզի, բազմությունների տեսության, ժամանակակից հանրահաշվի՝ առավելագույն չափով ընդհանրացված և վերացարկված հասկացություններից ու մեթոդներից:

## Եզրակացություն

Տարրական դասարաններում եզակի դասեր են իրականացվում՝ առանց կարդացածը վերարտադրելու: Տարբեր ձևերով պատմելու, ինչպես նաև դրանց նախապատրաստվելը դասը դարձնում են հետաքրքիր, բազմաբնույթ և նպաստում են աշակերտների խոսքի զարգացմանը, տրամաբանության զարգացմանը:

Դպրոցական տարիքի երեխաների դաստիարակության համակարգում բացառիկ կարևորություն է տրվում մաթեմատիկական հասկացությունների զարգացմանը, իմացական հետաքրքրությունների և ակտիվության դրսևորմանը: Երեխաների մաթեմատիկական հասկացությունների և հոգեկան գործունեության զարգացմանը նպաստող մեթոդներն ու հնարներն են՝

- դիտողական,
- գործնական,
- խոսքային,
- խաղային,
- դերային:

Գործնական աշխատանքների խնդիրն է գործողությունների, հմտությունների և ունակությունների գործնային յուրացումը: Այս աշխատանքը կազմակերպելիս հարկավոր է ուշադրություն դարձնել երեխաների սեփական կամքով դիդակտիկ նյութեր օգտագործելու ընդունակության զարգացմանը:

Որպես կանոն՝ մանրամասն պատմելը կրտսեր դպրոցականների համար դժվարություն չի ներկայացնում, քանի որ նրանք սիրում են ամեն ինչ պատմել մանրամասն՝ վերարտադրելով նույնիսկ ավելորդ, ոչ էական մտքերը: Մանրամասն պատմել սովորեցնելիս պետք է հասնել այն բանին, որ երեխաները ճշմարտությամբ վերարտադրեն դեպքերը, պահպանեն դրանց հաջորդականությունը, ընթացքը, տրամաբանությունը, գործածեն այն բառերն ու բառակապակցությունները, որոնք հենակետային են տվյալ ստեղծագործության համար:

Կարդացածը վերարտադրելու ուղղությամբ աշխատանքներն սկսվում են դեռևս գրաճանաչության երկրորդ փուլում, երբ յուրաքանչյուր հնչյուն-տառի ուսուցման հետ մեկտեղ աշակերտներին առաջարկվում է կարդալ նաև փոքրիկ բնագրեր և վերարտադրել:

## Օգտագործված գրականության ցանկ

1. Աբրահամյան Ս., Ժամանակակից հայերենի քերականություն, Երևան 1975թ.:
2. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., Հայոց լեզու գործնական աշխատանքների ձեռնարկ, Երևան 2006թ.:
3. Տեր-Գրիգորյան Ա., Կարդալու հմտությունների զարգացումը 1-4-րդ դասարաններում, Երևան 2001:
4. Տեր-Գրիգորյան Ա., <<Ընթերցանության մեթոդիկա>>, 2005
5. Հարությունյան Հ.Ս., Չիբուխյան Ս.Ա., «Մաթեմատիկայի իմ այբուբենը», Մաս 1,2, Երևան 2007
6. Հարությունյան Հ.Ս., «Խաղալով սովորենք մաթեմատիկա», Երևան 2003
7. Մկրտչյան Արաքսյա., Տրամաբանության տարրերի ներառումը և ուսուցման մեթոդիկական մաթեմատիկայի դպրոցական դասընթացում, Ե.: 2014